«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

G & Co AUDIT GROUP LLC

Հասցե: ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 32, բն.62
Հեռ: (+374 10) 399-655
Էլ փոստ: info@gaudit.am
Կայք: www.gaudit.am

Պետական գրանցման համար 264.110.789513
Լիցենզիա ԱԾ N 099
ՀՎՀՀ 00128775

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Երևան – 2018

«ՋԻ ԸՆԴ ՔՈ ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒՊ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հայաստանի Հանրապետություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	ԷՋ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7-14

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
առ 31 դեկտեմբերի 2017թ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31.12.2017 դրամ 000	31.12.2016 դրամ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	*1,204*	*1,268*
Ոչ նյութական ակտիվներ		*26*	*26*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***1,230***	***1,294***
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր		*-*	*600*
Շահութահարկի գծով գերավճար		*176*	*163*
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ		*5*	*2*
Դրամական միջոցներ և համարժեքներ	4	*484*	*37*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***665***	***802***
Ընդամենը ակտիվներ		**1,895**	**2,096**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	5		
Կանոնադրական կապիտալ		*50*	*50*
Չբաշխված շահույթ		*1,689*	*1,774*
Ընդամենը սեփական կապիտալ		**1,739**	**1,824**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ		*13*	*231*
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ		*143*	*41*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***156***	***272***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**1,895**	**2,096**

Տնօրեն՝ Գ.Ղլթչյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

2017թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2017 դրամ 000	2016 դրամ 000
Շարունակական գործունեություն			
Հասույթ	6	*5,017*	*5,942*
Ինքնարժեք	7	*(3,803)*	*(4,196)*
Համախառն շահույթ		1,214	1,746
Իրացման ծախսեր	8	*(250)*	*(250)*
Վարչական ծախսեր	9	*(1,049)*	*(1,073)*
Գործառնական շահույթ		(85)	423
Այլ ֆինանսական հոդվածներ		-	-
Շարունակական գործունեությունից շահույթ մինչև հարկումը		(85)	423
Ընդհատված գործունեություն			
Ընդհատված գործունեությունից շահույթ/վնաս		-	-
Շահութահարկի գծով ծախս		-	*(85)*
Շահույթ հարկումից հետո		(85)	338
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք			
Սեփական կապիտալում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(85)	338

Տնօրեն՝ Գ.Ղլթչյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Դ 000

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվար 2016թ.	**50**	**1,436**	**1,486**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	338	338
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2016թ.	**50**	**1,774**	**1,824**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	(85)	(85)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2017թ.	**50**	**1,689**	**1,739**

Տնօրեն՝ Գ.Ղլթչյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
2017թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2017-31.12.2017	01.01.2016-31.12.2016
	Դ 000	Դ 000
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	***37***	***43***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	*6,620*	*6,530*
Գործառնական այլ մուտքեր	-	-
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	*6,620*	*6,530*
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վճարումներ կրեդիտորներին	*3,041*	*4,260*
Վճարումներ աշխատակիցներին	*3,725*	*3,831*
Վճարումներ բյուջե	*1,493*	*1,909*
Այդ թվում շահութահարկ	*36*	*289*
Գործառնական այլ ելքեր	*51*	*43*
Ընդամենը գործառնական գուրծունեությունից ելքեր	*8,310*	*10,043*
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(1,690)***	***(3,513)***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	*250*	*250*
Տրամադրված փոխառություններ	-	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	*250*	*250*
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(250)***	***(250)***
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված փոխառություններից	*2,387*	*3,757*
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	*2,387*	*3,757*
Ֆինասավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված փոխառությունների մարումից	-	-
Վճարված շահաբաժիններ	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***2,387***	***3,757***
Ընդամենը դրամական միջոցներից զուտ հոսքեր	***447***	***(6)***
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	***484***	***37***

Տնօրեն՝ Գ.Ղլթչյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գործարար միջավայր

«Ջի Ընդ Քո Աուդիտ Գրուպ» ահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

1.2 Ընկերության գործունեության բնույթը

Ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականի նոյեմբերի 11-ին և 2014 թվականի փետրվարի 7-ին ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացել է աուդիտորական ծառայությունների իրականացման անժամկետ լիցենզիա (ԱԾ N 099) : Ընկերության պետական գրանցման համարն է՝ 264.110.789513, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00128775:

Ընկերությանը բացի աուդիտորական ծառայություններից արգելվում է զբաղվել որևէ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ՝ բացառությամբ հետևյալ ծառայությունների՝

ա) հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմում.

բ) հաշվապահական հաշվառման, տնտեսագիտության, ֆինանսների և աուդիտի գծով ուսուցանում.

գ) ակտիվների և (կամ) պարտավորությունների և (կամ) իրավաբանական անձի բաժնետոմսի (փայի, բաժնեմասի և այլ մասնակցության) գնահատում.

դ) հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորում ու հաշվարկում.

ե) կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.

զ) հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային, կառավարչական իրավաբանական խորհրդատվություն.

է) գործարար (բիզնես) պլանի կազմում.

ը) հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, տնտեսագիտությանը, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված մասնագիտական փորձաքննության իրականացում.

թ) մասնագիտական գրականության հրատարակում:

Այնուամենայնիվ Ընկերությունը ներկայումս զբաղվում է միայն աուդիտորական ծառայությունների մատուցմամբ:

Ընկերությունը չունի դուստր և կախյալ ընկերություններ, աշխատողների միջին ցուցակային թիվը ֆինանսական տարվա ընթացքում կազմել է 7 մարդ:

Ընկերության գործունեության հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0038, Լենինգրադյան 4ա:

2. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2.2. Չափման հիմքը

Սույն Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկիցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության համար որպես ֆունկիցիոնալ և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ), որը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության սկզբունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում: Ընկերությունը համարվում է անընդհատ գործող կազմակերպություն և առաջիկայում գործունեության ընդհատում չի նախատեսում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

2.6. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները գնահատվել են սկզբնական /ձեռք բերման/ արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ոչ նյութական ակտիվների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները:

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Լիցենզիա	1	100.0

2.7. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը :

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում նվազող մնացորդի մեթոդով մեթոդով: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են մաշվածության հետևյալ դրույքները՝

Հիմնական միջոցի տեսակը	Տարեկան մաշվածության դրույք (%)
Գրասենյակային գույք	5.0%

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում :

2.8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Որպես դրամական միջոցներ են ճանաչվել դրամարկղում առկա կանխիկ դրամը, Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված ընթացիկ հաշիվները:

2.9. Առևտրային և այլ դեբիտորական ու կրեդիտորական պարտքեր

2.9.1. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի

գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքերի հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում: Հաշվետու տարում Ընկերությունը դեբիտորական պարտքերի պահուստ չի ձևավորել՝ կասկածելի պարտքերի բացակայության պատճառով:

2.9.1. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզված արժեքով:

2.10. Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, զեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:
Ծառայությունների մատուցման պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ, որի ժամանակ կողմերի միջև կնքնվում է ծառայությունների հանձնման-ընդունման ակտ: Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել, ապա Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն և ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:
Պայմանագրի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

1. հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
2. հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
3. հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը
4. հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները

2.11. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Ընկերությունը Ֆինանսական վարձակալությամբ տրված և ստացված ակտիվներ չունի:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

2.12. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

2.13.Կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

3. Հիմնական միջոցներ

հազ. դրամ

	Գրասենյակային գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01.01.2017թ.	2,875	2,875
Գնում	-	-
Օտարում	-	-
Առ 31.12. 2017թ.	2,875	2,875
Մաշվածություն		
Առ 01.01.2017թ.	1,607	1,607
Հաշվարկ	64	64
Օտարում	-	-
Առ 31.12. 2017թ.	1,671	1,671
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2016թ.	1,268	1,268
Առ 31.12. 2017թ.	1,204	1,204

Ընկերության կողմից հաշվետու տարում հաշվարկված մաշվածության գումարը ներառվել է վարչական ծախսերի կազմում:

4. Դրամական միջոցներ և համարժեքներ

հազ. դրամ

	31.12.2017	31.12.2016
Ազգային արժույթի դրամարկղ	-	28
Հաշվարկային հաշիվ բանկում	484	9
Ընդամենը	**484**	**37**

5. Սեփական կապիտալ

5.1. Կանոնադրական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 դրամ և բաղկացած է 50 բաժնեմասից՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով:

5.2. Չբաշխված շահույթ և շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով: 2017թ-ին և սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել:

6. Հասույթ

հազ. դրամ

Ծառայությունների մատուցումից հասույթ	- 2017 -	- 2016 -
Աուդիտորական ծառայություններից հասույթ	5017	5,942
Ընդամենը	**5,017**	**5,942**

7. Ինքնարժեք

հազ. դրամ

Մատուցված ծառայությունների ինքնարժեք	- 2017 -	- 2016 -
Աուդիտորական ծառայությունների ինքնարժեք	3,803	4,196
Ընդամենը	**3,803**	**4,196**

8. Իրացման ծախսեր

հազ. դրամ

	- 2017 -	- 2016 -
Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիա	250	250
Ընդամենը	**250**	**250**

9. Վարչական ծախսեր

հազ. դրամ

	- 2017 -	- 2016 -
Աշխատանքի վճարման գծով ծախսեր	866	879
Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր	64	141
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	17	10
Բանկային ծառայությունների ծախսեր	51	43
Այլ ծախսեր	51	-
Ընդամենը	**1,049**	**1,073**

10. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում

- Նատալիյա Անտոնյան- Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր,
- Գրիգոր Ղլթչյան - Ընկերության տնօրեն

Ընկերության տնօրենից հաշվետու տարում ներդրվել են փոխառություններ, որի մնացորդը ֆինանսական տարվա ավարտին կազմել է 13 հազար դրամ, իսկ ղեկավարության վարձատրությունը 2017թ ընթացքում առանց հարկերի կազմել է 602 հազար դրամ:

11. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2018թ. մարտի 1-ին՝ Ընկերության տնօրեն Գրիգոր Ղլթչյանի կողմից: